ՀԱՍԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան. *29 դեկտեմբեր 2009թ.*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն, ի դեմս բանկի նախագահ Արթուր Ջավադյանի, մի կողմից և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ի դեմս Հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի, մյուս կողմից, հետագայում՝ «Կողմեր»,

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված սկզբունքներն ու դրույթները,

նպատակ ունենալով խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը, կանխել և արգելել շուկայում գերիշխող դիրքի չարաշահումը, հակամրցակցային համաձայնությունները և անբարեխիղճ մրցակցության դրսևորումները՝

համաձայնեցին հետևյալի մասին.

1. Ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որը կմշակի համապատասխան ընթացակարգեր, որոնք պետք է հնարավորություն տան Կողմերին անհրաժեշտ տեղեկատվություն ունենալ Հայաստնի կենտրոնական դեպոզիտարիայում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքը կատարած անձանց վերաբերյալ,

2. Ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որի խնդիրը կլինի երկկողմանի համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական առաջարկությունների մշակումը, մրցակցության զարգացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումն ու ներկայացումը Կողմերին, ինչպես նաև մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրների կապակցությամբ համատեղ քննարկումների, խորհրդակցությունների ու սեմինարների կազմակերպումն ու իրականացումը:

3. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրամադրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկ

ք. Երևան, Վ. Սարգսյան 6

նախագահ՝
Արթուր Ջավադյան

.....

Հայաստանի Հանրապետության
տնտեսական մրցակցության
պետական հանձնաժողով

ք. Երևան, Սիեր Մկրտչյան 5բ

նախագահ՝
Գևորգ Հարությունյան

.....